ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԻՇԽԱՆ ԹԱՄԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 48-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 247[6]-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Իշխան Թամազյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[6]-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2022 թվականի հունիսի 27-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Իշխան Թամազյանի (այսուհետ՝ դիմող) դիմումը, որով դիմողը խնդրել է.

«(…) որոշել

1. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 60-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներին:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[6]-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 75-րդ, 79-րդ և 39-րդ հոդվածներին»:

2. Ըստ դիմողի՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 48-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը հանրային իրավունքի ոլորտի հատուկ կարգավորում է: Դիմողը հիմնավորում է, որ նշված իրավակարգավորումն իր բնույթով հատուկ է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի միակողմ գործարքներին առնչվող ընդհանուր իրավակարգավորումներից առանձնահատկու-

թյուններ է պարունակում այնքանով, որքանով Օրենքը նոտարին թույլ չի տալիս մեկնաբանել լիազորագրի հասկացությունները, այլ բառերի և արտահայտություն-ների տառացի նշանակությունից ելնելու պարտադիր պահանջ է սահմանում՝ առանց մեկնաբանելու միջոցով լրացուցիչ լիազորություններ տալու:

Հետևաբար՝ դիմողը պնդում է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը: Ուստի՝ ՀՀ քաղա-քացիական օրենսգրքի իրավակարգավորումները, ըստ դիմողի, սույն գործով կիրա-ռելի չեն, քանի որ լիազորագրով անձի լիազորությունների շրջանակն ստուգելու նոտարի պարտականությունը՝ որպես ընդհանուր նորմից առանձնահատկություն, սահմանված է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով:

Դիմողի պնդմամբ՝ ստացվում է, որ գործարքի կողմի ներքին կամքի և արտա-քին կամահայտնության համակցությունը բացահայտելու ընդհանուր կանոնն ստո-րադասվում է հատուկ կանոնով սահմանված նոտարի այն պարտականությանը, ըստ որի՝ լիազորագրում բառացի և տառացի նշանակությամբ լիազորության բացա-կայության դեպքում հավելյալ լիազորությունները չեն մեկնաբանվում, և նոտարա-կան գործողության կատարումը մերժվում է: Ավելին՝ դիմողը գտնում է, որ անդեմ, անիմաստ կամ բազմիմաստ լիազորությունների դեպքում նոտարական գործողու-թյուններն արգելված են Օրենքով:

Ըստ դիմողի՝ տվյալ դեպքում վիճարկվող նորմի մեկնաբանման առնչությամբ ՀՀ դատարանների կողմից առկա են միմյանց հակասող մեկնաբանություններ, հետևաբար վիճարկվող նորմի անորոշությունն իր համար ոչ միայն իրավական անկանխատեսելիություն է ստեղծում, այլև Սահմանադրության 2-րդ գլխով ամրագրված իր հիմնարար իրավունքների խախտման է հանգեցնում:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով վարչական դատավարության կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ դատական օրենսգրքով: Միաժամանակ, դիմողը պնդում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառությունը վարչական դատավարությունում թույլատրված է միայն ՀՀ

վարչական դատավարության օրենսգրքում դրա վերաբերյալ ուղղակիորեն նշված լինելու դեպքում:

Հետևաբար՝ ըստ դիմողի՝ վարչական դատավարության ընթացքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[6]-րդ հոդվածի կիրառությունն առհասարակ պետք է բացառվեր, քանի որ վարչական դատավարության կարգում բացակայում է օտարերկրյա դատական ակտերի ճանաչման որևէ պահանջ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի իրավակարգավորումը, դիմողի կարծիքով, թույլատրում է օտարերկրյա պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված կամ վավերացված փաստաթղթի իսկության ճանաչումը վարչական դատարանի կողմից, քանի դեռ հիմնավոր կասկածի դեպքում փաստաթղթի ոչ իսկական լինելը չի ապացուցել վիճարկող կողմը:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247[6]-րդ հոդվածը չի համապատասխանում իրավական որոշակիությանն այնքանով, որքանով առաջանում է այնպիսի անորոշություն, որը թույլ չի տալիս անձին դրսևորելու համապատասխան վարքագիծ. մասնավորապես՝ կանխատեսելի և որոշակի չէ նաև վարչական դատավարությունում ամուսնալուծության օտարերկրյա դատական ակտի ճանաչման ենթակա լինելու/չլինելու հարցը:

Դիմողի պնդմամբ՝ դրա հետևանքով խախտվում է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության և ժառանգության իրավունքների արդյունավետ իրացումը, ինչն իր հերթին խախտում է անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

3. Ուսումնասիրելով ներկայացված դիմումը, դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ գործի քննությունն ամբողջությամբ մերժելու հիմք, որպիսի պայմաններում սույն գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով,

երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) **երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները**,

գ) երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սույն դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ **դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները**՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակագրական տեսանկյունից դիմողի նկատմամբ կայացված վերջին դատական ակտը թիվ ՎԴ/0464/05/17 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 2022 թվականի հունվարի 14-ի որոշումն է, որը չի կարող համարվել որպես դիմողի կողմից բարձրացված հարցերի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված՝ դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում, քանի որ Վճռաբեկ դատարանը նշված որոշմամբ բավարարել է վճռաբեկ բողոքը՝ բեկանելով

Վերաքննիչ վարչական դատարանի 14.06.2019 թ. որոշումը և գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **դիմողը, ըստ էության, չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները:**

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական արդարադատություն հայցելու անձի իրավունքը, ինչպես նաև օրենսդրությամբ դրա իրացման նպատակով նախատեսված ընթացակարգային կարգավորումներն ինքնանպատակ չեն, ուստիև հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող: Նշված կարգավորումները միտված են դիմողի կողմից նախքան Սահմանադրական դատարան դիմելու իրավունքն իրացնելն իր ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման համար օրենսդրությամբ նախատեսված բոլոր հնարավորությունները սպառելուն:

Այս համատեքստում հարկ է սահմանադրական արդարադատություն հայցող ֆիզիկական և իրավաբանական անձանց ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ վերջիններս մինչև Սահմանադրական դատարան դիմելն օրենսդրական պարտականություն են կրում պահպանելու այն պահանջները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն իրավասու չէ դիմել Սահմանադրական դատարան, քանի որ չի պահպանել **ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելու** և **վերջնական դատական ակտով** իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պահանջները:

Վերահաստատելով 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ:**

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունում, **եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Իշխան Թամազյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^{6}-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

8 հուլիսի 2022 թվականի
ՍԴԱՈ-120